» Քրիստոսի). շինութեան ծախքը նախ
» վճարեց Իպն Մաշքուր, ի ժամանակի
» օծմանն յԱպու Մանսուրէ, որ և էր վե-
» րակացու շինութեան պարսպաց Գահի-
» րէի և Մսրայ։ Այս վանաց մէջ կայ
» աշտարակ մի, ազօրիք մի, և պարտէզ
» մի, որ Հայոց ստացուած էր. և երբ
» անոնցմէ ելաւ, Յակոբիկք ստացան, 600
» թուականէն ետեւ (Քրիստոսի 1204)։
» Երբ Ապու Եասիր մեռաւ, վանքն եղաւ
» ստացուած իր աշակերտաց և Ղփտեաց,
» և այսպէս մնաց մինչեւ մեր ատեն »։

Այդ 1204 թուականէն ինչուան Աբու-
սահլի գրութեան ատեն, ինչպէս յառա-
ջաբանիս մէջ տեսանք, շատ տարի չէր
անցած. յետոյ Տուրայի վանաց և եկեղեց-
ւոյ ինչ ըլլալը՝ քննելի է Բրոլէրի գրոց
մէջ։ Մենք մտաբերել տանք՝ որ այդ տեղ-
ւոյ յիշեալ փոքր եկեղեցին՝ յանուն Ս.
Գրիգորի՝ անտարակոյս էր Լուսաւորչին
մերոյ, զի և վկայուի ի ձեռս Հայոց ըլ-
լալն։ Երկրորդ մտաբերելին է՝ մեծագոյն
եկեղեցւոյ շինութիւնն և վանաց պայծա-
ռութիւնն, շնորհիւ մեծազօր Հայ վրզրկին
(Պատր ալ-ճամալի կամ Ամիր ալ-ճիւյիւշ)
և մեծափայլ Գրիգոր Վկայասէր կաթո-
ղիկոսի։ Ցեղեացս մօտ լերանց գագաթում
Ալ-Քուսայիր վանաց Մելքիղաց եկեղեցի-